

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՖԱՏԵՄԵՅ ՌԱԶԱՔԱԼԻ ՌԱԴԻՍԻՔԱԼԱԵՒ

ՊՈՍՏՄՈԴԵՐՆԻԶՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

**Ժ. 01. 04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԶԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԻՄ ԲԱԳՐԱՏԻ

բանասիրական գիտությունների
թեկնածու
ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍԻ

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հուլիսի 1-ին՝ ժամը 12⁰⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՅ-ի
գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներկայացվող ատենախոսության մեջ ժամանակակից հայ դրամատուրգիայի քննադատությունն իրակա-
նացվել է առանձնահատուկ տեսանկյունից: Ուսումնասիրության սկզբնական փուլում ուսումնասիրվել է պոստմո-
դեռնիզմը փիլիսոփայության, գրականության և հետո միայն դրամայի բնագավառներում, որպեսզի ընթերցողին
ներկայացվի այն իրավիճակի ընդահանուր և համապարփակ պատկերը, որը կոչվում է պոստմոդեռնիստական:
Այնուհետև ներկայացվել է տեսական հատված արտուրդի մասին, որը պոստմոդեռնիստական թատրոնի
ուսումնասիրման հիմնական աղբյուրն է: Այն փուլում, երբ սկսվել են պիեսների քննադատության և վերլուծության
աշխատանքները, տպագրվել են երեք հոդվածներ, որոնք վերաբերում են հայ պոստմոդեռնիստ դրամատուրգ-
ների՝ Կարինե Խողիկյանի, Գուրգեն Խանջյանի, Ջորայր Խալափյանի երկերին: Նրանց պիեսների ուսումնասի-
րության ընթացքում փորձ է արվել այդ ստեղծագործություններում գտնել պոստմոդեռնիստական տարրեր:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայկական արվեստի ժամանակակից փուլը համարվում է պոստմոդեռնիստական: Այդ իսկ պատճառով
այս բնագավառում պոստմոդեռնիզմի թողած ազդեցության ուսումնասիրությունն արդիական է դառնում:
Ներկայացվող ատենախոսության միջոցով փորձ է բնութագրել հետխորհրդային շրջանի հայ դրաման:
Պոստմոդեռնիզմը հստակ սահմանված դպրոց չէ, ուստի դրա սահմանումը ներկայացնելու համար ես նպատակ
ունենմ եմ սահմանել ինչ է էքզիստենցիալիզմը, արտուրդի թատրոնը, ժամանակակից դրաման, միհիլիզմը և որոշ
այլ դպրոցներ, քանի որ պոստմոդեռնիզմը մեկն է այդ ուղղություններից, այն ըստ էության դրանց բոլորի
միախառնումն է: Իմ նպատակն է ներկայացնել ժամանակակից հայ դրամայի ընդհանուր պատկերը
պոստմոդեռնիզմի և արտուրդի թատրոնի տեսանկյունից:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Իմ կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից հայ դրամայի մասին
անզլալեզու ուսումնասիրություններ չկան: Կան հայալեզու ուսումնասիրություններ, սակայն դրանք մեծ թիվ չեն
կազմում: Այս ոլորտի վերաբերյալ գրականության պակասի մյուս պատճառն էլ այն է, որ ուսումնասիրողները
գերադասում են այնպիսի թեմաներ վերհանել, որոնք մեծ տարածում ունեն: Իհարկե, վերոնշյալ թեմայի
ուսումնասիրությունը բավականին դժվար էր նշված պատճառներից ելնելով և հատկապես այն, որ օգտագործվող
գրաանությունը հիմնականում հայերեն էր և այն ես կարողանում էի օգտագործել միայն անգլերեն թարգմանելու
պարագայում: Ուստի ներկայացվող ատենախոսությունը օգտակար կլինի հատկապես այն անձանց համար,
ովքեր ցանկանում են ուսումնասիրել ժամանակակից հայ դրաման:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրությունը հիմնականում կատարել է թեմայի ընդհանուր գաղափարախոսության ընկալման,
ուսումնասիրության, վերլուծության և մեկնաբանության մեթոդների կիրառման միջոցով: Ատենախոսության
ներկայացման ընթացքում օգտագործել են հիմնականում վերլուծական-նկարագրական մեթոդը՝ վերլուծելու
համար պիեսներն ու նյութի տեսական հատվածները:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Եվրոպայում և Ամերիկայում մեծ տարածում գտած արևմտյան պոստմոդեռնիստական թատրոնի մասին
բազում ուսումնասիրություններ կան: Դրանք բոլորը ներառում են այն պոստմոդեռնիստական տարրերն ու

մոտեցումները, որոնց ես անդրադարձել եմ ատենախոսության էջերում: Սակայն պոստմոդեռնիզմի և հայկական դրամայի վրա դրա ազդեցության մասին չկան մեծ թվով ուսումնասիրություններ, բացառությամբ Արմեն Ավանեսյանի «Ժամանակակից հայ դրամա» աշխատության, որը տպագրվել է 2011 թվականին: Ըստ գրականագետ Ջավեն Ավետիսյանի «20-րդ դարավերջի հայ գրականություն» աշխատության՝ հայ ժամանակակից դրամայում թե՛ թեմատիկ, թե՛ ժանրային առումով նոր առանձնահատկություններ են ի հայտ գալիս: Հետևաբար նոր ժանրերի ձևավորումը ժամանակի պահանջ է: Նոր փիլիսոփայական գաղափարները, նոր գրական ուղղությունները, որոնք մուտք են գործում գրականության բնագավառ, պատճառ են դառնում նորույթի ձևավորման համար: Այս խնդիրներին է անդրադարձել հայ պոստմոդեռնիստական ստեղծագործությունների քննությամբ զբաղվող տեսաբան Գուրգեն Գասպարյանը: Նա ժամանակակից հայ դրամատուրգ Կարինե Խողիկյանի «Իմ դասականները» պիեսների ժողովածուի առաջաբանում անդրադառնում է պոստմոդեռնիստական դրամայի քննադատությանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են Հայաստանի Հանրապետության գիտական հանդեսներում տպագրված հոդվածներում: Ուսումնասիրությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականության տեսության բաժնում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունում անդրադարձ է կատարվել արևմտյան պոստմոդեռնիզմին և այլ ժամանակակից տեսություններին, ինչպիսին է, օրինակ, արևմտյան թատրոնը դրամայում: Իսկ ուսումնասիրության նեղ շրջանակը ժամանակակից հայ դրաման է: Ուստի ատենախոսության էջերում փորձ են կատարել սահմանել, թե ինչ է պոստմոդեռնիստական թատրոնը և նաև փորձել պոստմոդեռնիստական տարրեր գտնել իմ ուսումնասիրության շրջանակ համարվող ժամանակակից հայ դրամատուրգիայում:

Գլուխ 1.

ՊՈՍՏՄՈԴԵՐՆԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ

Ատենախոսության այս գլուխը սկսել եմ ժամանակակից դրամայի մասին ընդհանուր տեղեկություններով: Դժվար է ասել, թե ժամանակակից դրաման կոնկրետ որ ժամանակաշրջանում, կոնկրետ որ ստեղծագործության ի հայտ գալով սկսեց զարգանալ: Երբ Իբսենը, Սթրինբերգը, Շոուն իրենց ստեղծագործություններով ցույց տվեցին, թե ինչ է «լավ հորինված պիեսը», այդ ժամանակվանից սկսած զարգացում ապրեցին փորձարարական թատրոնի ձևերն ու ընկալումները, որոնք հաճախ հակասության մեջ էին մտնում ռեալիզմի սկզբունքների հետ: Այդ պատճառով էլ ժամանակակից դրամայի ծիրում մենք կարող ենք հանդիպել արևմտյան, ազիտ-պրոպի, էպիկական թատրոնի տարրեր:

Հակասական համարվող դրամատուրգ Հենրի Իբսենը 19-րդ դարի վերջին տարիներին գրել է 25 պիեսներ, որոնցից երկուսը՝ «Տիկնիկի տունը» և «Հեղա Գաբլերը» ամենահաճախ բեմադրվող պիեսներից են: Իբսենը հայտնի է՝ որպես ժամանակակից ռեալիզմի նախահայր: Նրա տաղանդի շնորհիվ թատերական ներկայացման ժամանակ հանդիսատեսը շփվում է մարդկային հոգեբանության և իրավիճակների տարբեր ձևերի հետ՝ առանց ձանձրության մշույլ զգալու: Նրա պիեսները խորհրդանշական էին, դրանցում արծարծված որոշ թեմաներ նույնիսկ սկանդալային էին համարվում այդ ժամանակների համար: Իբսենի հանրաճանաչ պիեսներից են նաև «Ուրվականները», «Վայրի բաղը» և այլն:

Ռուսական իրականության մեջ մեջ հանրահայտ դրամատուրգ է համարվում Անտոն Չեխովը: Նրա ստեղծագործություններից է «Ծովաորորը», «Բալի այգին» և այլն: Գերմանացի հայտնի դրամատուրգ է Գերհարթ Հոֆմանը, որը «Ջուլիանները» պիեսի հեղինակն է: Այս պիեսում առաջին անգամ ներկայացվում է աշխատավոր

հասարակարգը: Մաքսիմ Գորկիի «Յատակում» պիեսում ևս կա աշխատավոր դասակարգը ներկայացնող կերպար: Ֆրանսիական իրականության մեջ ժամանակակից դրամայի գոհարներից են Ալեքսանդր Դյումայի ստեղծագործությունները. օրինակ՝ «Կամելիազարդ տիկինը», «Դեմի Մոնդը» և այլն: Դյուման գրում էր 60-ականներից սկսած թատերական աշխարհը նոր ավանգարդիստական թատրոնի գոյության անհրաժեշտությունը զգաց: Այդ ժամանակաշրջանում ավանդական թատերական ստեղծագործությունները ներկայացվում էին Մանհեթանի արևմտյան հատվածում, Բրոդվեյի շրջակայքում: Այն դեպքում, երբ ավելի մեծ պահանջարկ ունեցող նոր ոճի թատերական ստեղծագործությունները ներկայացվում էին հիմնական թատերական թաղամասից՝ Բրոդվեյից դուրս, հենց այստեղից էլ ծնվեց «Բրոդվեյից դուրս» արտահայտությունը, որը վերագրվում է ժամանակակից պիեսներին կամ դասական պիեսների ժամանակակից մեկնաբանություններին: Փոքր թատրոնները, որոնք ի վիճակի չէին ենթարկվելու համընդհանուր կանոններին, գործում էին ժամանակին ստեղծված թատերական շրջանակից դուրս: Ըստ այդմ՝ դրանք կոչվում էին «Բրոդվեյից դուրս» ոլորտից դուրս գտնվող թատրոններ: Այսպիսի թատրոնները կոչվում էին ՕԵ, այնուհետև ՕՕԵ, ավելի ուշ ավանգարդիստական, փորձարարական, կամ գաղափարական, այլընտրանքային թատրոններ:

Կյանքի արսուրդայնությունը ժամանակակից դրամայի հիմնական թեմատիկան է: Ինչպես քննադատներն են հաճախ նշում, արսուրդի թատրոնը զարգացում ապրեց ի պատասխան 20-րդ դարի բարոյական, կրոնական և սոցիալական համակարգերի փլուզման: Ուստի արսուրդիստների հիմնական նպատակն էր ցույց տալ, թե որքան արսուրդային է կյանքը: Արսուրդիստների վրա գաղափարական մեծ ազդեցություն են գործել դադայիստական և սյուրռեալիստական շարժումները: Ընդհանուր առմամբ, բոլոր այս շարժումների հետևորդներն էլ համաձայնում են, որ կյանքն այնքան անտրամաբանական է, իսկ լեզուն որպես հաղորդակցության միջոց այնքան անհամապատասխան է մարդկային շփումներին, որ միակ փրկությունն այդ իրավիճակից կարող է լինել ծիծաղը: Աբոթոնը նշում է. «Արսուրդիստական պիեսներում ճշմարտությունը հավասարեցված է պատրանքի, որպեսզի ավելի ցայտուն կերպով ցուցադրվի աշխարհի արսուրդայնությունն ու անհուսալիությունը»:¹ Նշված մոտեցումներին կարելի է հանդիպել Բեքեթի և Իոնեսկոյի ստեղծագործություններում: Ավելի, արսուրդի թատրոնին բնորոշ այլ ստեղծագործություններում կարելի է հանդիպել անգամ մադձի, բռնության տարրերի կիրառման: Այդպիսիք են Փինթերի, Ուիլիամսի, Ջենեթի և Ալբրի պիեսները: Ժամանակակից դրամայի թեմատիկա են դառնում նաև մահը, փառքի ձգտումը, ստրկությունը, պատմական ժառանգությունը, ցեղասպանությունը, հաշմանդամությունը, սեռային խտրականությանը վերաբերող հարցեր, կյանք-սուտ հարաբերությունները, սերունդների, մշակույթների և կրոնների միջև եղած հակասությունները, ռասիզմը, նյութական շահագործումը, պատերազմը, բռնությունը, կամանց իրավունքների պաշտպանությունը և այլն:

Ատենախոսության ժամանակակից դրամային նվիրված ենթազխին հաջորդում է պոստմոդեռնիզմին և փիլիսոփայությանը նվիրված ենթազխին: Ատենախոսության այս հատվածում մատնանշում են այն փիլիսոփաներին, ովքեր մեծապես ազդել են պոստմոդեռնիստական մտքի վրա: Այդպիսի փիլիսոփաներ են Նիցշեն, Յայդեգերը, Կիերկեգորը, Բարտը, Վատինոն և այլք: Նաև անդրադառնում են պոստմոդեռնիզմի և էքզիստենցիալիզմի միջև եղած հարաբերություններին:

Պոստմոդեռնիստական միտքը ծնունդ առավ այն ժամանակ, երբ Նիցշեն սկսեց քննադատել արևմտյան պատմությունը: Նիցշեի բանալի գաղափարներն են Աստծո մահը, հավերժական վերադարձը, ապոլոնյան և դիոնիսյան մոտեցումները, մարդկային կյանքի ուժը: Նիցշեի փիլիսոփայության կենտրոնական խնդիրն է կյանքի հաստատումը, որը հարցականի տակ է դնում բոլոր այն դոկտրինները, որոնք սպառնում են կյանքից բխող էներգիան: Բոլոր այս գաղափարները կարող են սոցիալական հարթությունում լինել գերիշխող: Նիցշեի ազդեցությունը երկար ժամանակ հաստատուն կերպով զգացվում էր փիլիսոփայության բնագավառում, այն

¹ Աբոթոն, 2003, էջ 12

նշանակալի է էկիստենցիալիզմի, պոստմոդեռնիզմի, պոստստրուկտուալիզմի բնագավառում: Նիցշեի՝ ճշմարտության գնահատումն ու օբյեկտիվության հարցի քննությունը դարձել են արմատական մեկնաբանությունների կիզակետ՝ հիմնականում մայրցամաքային ավանդույթներում: Աստված մահ է գաղափարը գերիշխող է Նիցշեի բազում ստեղծագործություններում («Չվարթ գիտություն»): Այն դարձել է Նիցշեի ամենահայտնի արտահայտություններից մեկը: Որոշ քննադատներ Նիցշեին այս արտահայտության համար աթեիստ են համարում, մյուսները՝ օրինակ Յոհաննես Կարծում են, որ Նիցշեի այս պնդումն արտացոլում է աստվածության ավելի հաստատուն գիտակցություն: Ժամանակակից գիտության վերջին զարգացումները և եվրոպական հասարակության ավելի ու ավելի աշխարհիկ բնույթը «սպանեցին» արքայազան աստծոն, որը ծառայում էր որպես Արևմուտքի գաղափարախոսության և գնահատման հիմնադրույթ հազարավոր տարիներ շարունակ: Աստծո մահը կարող է հանգեցնել անգամ միակողմանի հավանականության, ըստ որի՝ հավատը չունի հատուկ նշանակություն, կյանքը աննպատակ է: Նիցշեն հայտարարում է, որ քրիստոնեության բարոյական հայեցակարգերը մարդկանց սպասարկում են յուրահատուկ արժեքներով, որոնք ծառայում են՝ որպես գիտելիքի ձեռքբերման հիմնական միջոց: Այս տեսանկյունից աշխարհի ձևավորման հարցում, որտեղ լուրջ դերակատարություն է կատարում գիտելիքի կուտակումը, քրիստոնեությունը ծառայում է որպես հակաթույն միակողմանի, դրա հետևանքով առաջացած անմտության, նպատակի բացակայության դեմ: Հայդեգերը առաջ քաշեց այն միտքը, թե «եթե Աստված մահ, ապա աշխարհը մեծ կորուստ է ունեցել ուժի կիրառման և ձևավորման հացում, ուստի այլևս ոչինչ չկա, որի վրա մարդ կարող է հիմնվել ու պահպանել հավասարակշռությունը»:

Նիցշեն պնդում է, որ Աստծո մահը կհանգեցնի համաաշխարհային հեռանկարների կորստի և օբյեկտիվ ճշմարտության հաջորդականության կորստի: Նիցշեն ինքը մերժում է օբյեկտիվ ճշմարտության գաղափարը, պնդում, որ գիտելիքը պայմանական է և կախված է տարբեր հետաքրքրություններից ու երևույթների նկատմամբ աշխարհայացքից: Սա հանգեցնում է կանոնների անընդհատ վերագնահատման՝ կախված անհատական հեռանկարներից: Այս տեսությունը կոչվում է պերսպեկտիվիզմ:

«Այսպես խոսեց Ջրադաշտը» աշխատության մեջ Նիցշեն պնդում է, որ արժեքների սեղանը կախված է յուրաքանչյուր անհատի գլխավերևում: Նիցշեն վստահ է, որ մարդկային հզորությունը ոչ թե հավատի մեջ է, այլ գնահատման գործողության, քանի որ արժեքները, որոնք հասարակությունը ձգտում է որդեգրել, այնքան կարևոր չեն, որքան կոլեկտիվ կամքի դրսևորումը: Կամքն ավելի էական է, քան նպատակի արժեքը: «Հազարավար նպատակներ են եղել կյանքում, -գրում է Նիցշեն - քանի որ աշխարհում կան հազարավոր մարդիկ»: Նիցշեն պնդում է, որ կյանքում մեկ նպատակ մշտապես պակասում է: Այստեղից էլ ծնվել է հազար ու մի նպատակ արտահայտությունը:

Նիցշեի փլիսոփայության շատ գծեր Մաքս Վեբերն ու Հայդեգերը յուրացրել են: Նիցշեի գաղափարների կիրառմամբ նրանք կառուցել են իրենց մշակութային և փիլիսոփայական ստեղծագործությունները, ինչպես նաև իրենց քաղաքական հայացքները: «Նիցշեի հաջողությունը պատմական է. նա առավել քան պարզությամբ, քան աշխարհում որևէ այլ փիլիսոփա հասկանում է հիմնախնդիրների բնույթը: Նա հասկանում է ոչ միայն դրանց օբյեկտիվությունը, այլև կամքը դրանք լուծելու նպատակադրվածության հարցում»:²

Ապոլոնյանն ու դիոնիսյանը փիլիսոփայական հասկացություններ են, որոնք հիմնված են հին հունական առասպելաբանության ընդհանուր գծերի վրա, այս դեպքում Ապոլոնյան և Դիոնիսյան հասկացության վրա: Այս հասկացությունները սերտորեն կապված են «Ողբերգության ծնունդ» աշխատության հետ: «Ողբերգության ծնունդ»-ի տպագրությունից մեկ տարի առաջ Նիցշեն գրել է մի հատված, որը կոչվում էր «Երաժշտություն և բառեր»: Այստեղ նա քննության է ենթարկում Շոպենհաուերի այն պնդումը, որ երաժշտությունը ամեն ինչ ուղղակի էությունն է: Նիցշեն զարգացնում է այն միտքը, որ ողբերգությունը ծնվել է երաժշտությունից: Նա առաջ է քաշում այն թեզը, որ Ապոլոնյան ու Դիոնիսյան համաձուլվածքից են ծնվում դրամատիկ արվեստն ու ողբերգությունները: Նիցշեն պնդում է, որ այս համաձուլվածքին հունական դրամայում ժամանակին չեն հասել: Ապոլոնը

² Lutz Christopher Stephen: In The Ethnics of Alasdair MacIntyre. UK. Rowman & littlefield Publishing Group. 2009. էջ 37

համաչափության, պարզության և առաջընթացի խորհրդանիշն է, Դիոնիսոսը՝ անկարգության, թունոտության և էքստազի խորհրդանիշը: Նիցշեն օգտագործում է այս երկու համախումբը, քանի որ կարծում է, որ աշխարհը կազմավորված է հենց այս երկու հակադիր գաղափարախմբերի հիման վրա, որոնց հիմքերը դրվել են հին հունական մշակույթում: Նիցշեի համոզմամբ՝ այս երկու հակադիր սկզբունքներն ունեն ճանաչողական նշանակություն, որոնք առաջ են գալիս արվեստի միջոցով և մարդուն ուժ հաղորդում:

Ապոլոնյան և դիոնիսյան հակադիր իրավիճակները ակնհայտ են դառնում ողբերգություններում. օրինակ՝ ողբերգության ապոլոնյան հերոսը պայքարում է կյանքում կարգուկանոնի հաստատման համար՝ հակադրվելով դիոնիսյան քաոտիկ ճակատագրին: Ջարգացնելով Համլետի կերպարի հիմքում ընկած այն գաղափարը՝ համաձայն որի՝ մարդ չի կարողանում որոշում կայացնել և դառնում է գործողության մեջ գտնվող մարդու հակաթեզիսը: Նիցշեն առաջ է քաշում այն գաղափարը, որ դիոնիսյան կերպարները, գիտելիք ձեռք բերելով հասկանում են, որ իրենց գործողությունները կյանքի ընթացքը առանձնապես չեն կարող փոփոխության ենթարկել, ուստի առավել փոքր է դառնում նրանց ցանկությունը ինչ-որ քայլ կատարել իրականության ընթացքը փոխելու համար: Համլետը դասվում է կերպարների հենց այս շարքին: Նա փորձում է ուրվականի տեսիլքի ներքո հասնել իր համար կատարյալ իրականության: Այսօրինակ դրամաները հանդիսատեսին հնարավորություն են տալիս ավելի խորությամբ զգալ այն, ինչ Նիցշեն կոչում էր «վաղեմի միասնություն», որը վերակենդանացնում է դիոնիսյան բնույթը: Նա այս միասնությունը բնութագրում է որպես ուժի աճ, փորձ, որպես մոլեգնության խորհրդանիշ: Մոլեգնությունն այս պարագայում հանդես է գալիս որպես թունավորում: Այն հատկանշական է նաև ֆիզիոլոգիական իրավիճակի առումով, քանի որ այդ իրավիճակը թույլ է տալիս արվեստի գործ ստեղծել: Նիցշեն «Ողբերգության ծնունդ» աշխատության մեջ գրում է. «Երազանքի փորձության բերկրալի անհրաժեշտությունը մարմնավորվել է հույների կողմից՝ Ապոլոնի կերպարում. Ապոլոնը միևնույն ժամանակ գուշակությունների աստվածն էր, ով նաև լույս ճառագող աստված էր, ուստի այդ իսկ պատճառով ընդունված է համարել, որ աստծո լույսը գեղեցիկ կենսական պատրանքներում կատարում է առաջնորդող դերակատարություն: Բայց Ապոլոնի վերաբերյալ մեր պատկերացումներում մենք պետք է ներառենք նաև այն, որ երազանքի պատկերման դեպքում չպետք է անցնել սահմանները, քանի որ այն կարող է ունենալ պաթոլոգիական ազդեցություն: Պետք է դրսևորել զսպվածություն հատկապես վայրի զգացմունքներին ազատություն տալու առումով»:³

Նիցշեն վստահ է, որ Էսքիլեսի և Սոֆոկլեսի ստեղծագործությունները գեղարվեստական ստեղծագործության գլուխգործոց են, իսկ «Էվրիպիդեսը» ողբերգության կատարյալ օրինակ է: Նա նշում է, որ «Էվրիպիդես»-ում առկա է սոկրատյան ռացիոնալիզմի և բարոյականության օգտագործումը և պնդում, որ մոլագարությունը ողբերգության սկզբնավորման հիմքում է: Նիցշեն նկատում է, որ այս դեպքում պահպանված է Ապոլոնյան և Դիոնիսյան մոտեցումների հավասարակշռությունը: Սոկրատն ընդգծում է այն հանգամանքը, որ ստեղծագործության կառուցման մի որոշ մակարդակում նկատելի է առասպելի արժևորումն ու մարդկային գիտելիքի արդյունքում առաջացած տառապանքը: Պլատոնը շարունակում է այս գիծը երկխոսությունների միջոցով: Նա նշում է, որ ժամանակակից աշխարհը ժառանգեց պատճառահետևանքային կապերի այնպիսի գեղարվեստական ազդակներ, ինչպիսիք առկա են ապոլոնյան և դիոնիսյան կերպավորումներում: Վերոնշյալ դրույթը հանգեցնում է նրան, որ Պլատոնը պնդում է, թե եվրոպական մշակույթը Սոկրատի ժամանակներից մինչև մեր օրեր հիմնականում եղել է ապոլոնյան, ինչպես նաև աղքատիկ: Այն ժամանակահատվածում, երբ գերիշխող է եղել ապոլոնյան մշակույթը, դիոնիսյան մշակույթում զգացվել է արվեստի հաջորդականության ապահովման գործիքների պակաս: Իսկ երբ գերիշխող է եղել դիոնիսյան ազդեցությունը, ապոլոնյան մշակույթը կրքի պակաս է դրսևորել: Միայն այս երկու մոտեցումների ոսկե միջինի դրսևորման դեպքում է ստացվում իսկապես կատարյալ ողբերգությունը, որը կարելի է տեսնել հին հունական ողբերգության օրինակով:

Այս գաղափարի շարունակությունը կարելի է տեսնել նաև «Մշակույթի օրինակներ» աշխատության մեջ, որտեղ Ռուբ Բենեդիկտը օգտագործում է Նիցշեի ապոլոնյան և դիոնիսյան հակադրությունները այն տարածելով

³ Nietzsche Friedrich: Birth of Tragedy. Translated by Walter Kaufmann. New York. Modern Library Press. 2000, էջ 11

ամերիկյան էքնիկ մշակույթների վրա: Այս խնդրին են անդրադարձել նաև Կարլ Յունգն ու Միշել Ֆուկոն: Նա հղում է կատարում Նիցշեի՝ ողբերգության ծնունդի և մահվան նկարագրությանը և Նիցշեի այն բացատրությանը, համաձայն որի՝ արևմտյան մշակույթում ողբերգությունը մերժում է ողբերգականությունը, ինչպես նաև՝ սրբությունը: Օրինակ՝ նկարիչ Մարկ Ռոտկոն մեծապես ազդվել է Նիցշեի՝ ողբերգության վերաբերյալ ունեցած գաղափարներից, որոնք արտացոլված են «Ողբերգության ծնունդը» աշխատության մեջ:

Նիցշեի գաղափարախոսության մեկ այլ կարևոր հասկանություն է ubermensch, որը թարգմանվում է որպես՝ գերմարդ, գերեակ: Ջարգացնելով նիհիլիզմի գաղափարախոսությունը՝ Նիցշեն գրել է. «Այսպես խոսեց զրադաշտը» ներկայացնում է գերմարդու հասկացությունն ու նրա գնահատումը: Լամբերտի տեսության համաձայն՝ «Աստծո մահվանը պետք է հաջորդի փոստսանքի երկարատև մթնշաղղ և նիհիլիզմը: Ջրադաշտը գերմարդու նվերն է մարդկությանը, այն լուծման ճանապարհ է՝ առաջարկված գերմարդու կողմից»: ⁴ Ջրադաշտը գերմարդուն ներկայացնում է որպես նոր արժեքների հեղինակ, և գերմարդը հայտնվում է՝ որպես Աստծո մահվան և նիհիլիզմի խնդրի լուծման ուղի: Գերմարդը չի հետևում հասարակ մահկանացուների դավանած բարոյականությանը՝ կարծելով, որ այն նպաստում է միջակությանը: Ջրադաշտը հայտարարում է իր վերջնական նպատակը, որն է ճանապարհ դեպի մարդկային կատարելություն: Նա առաջարկում է ինքնակառավարման աստիճանին հասնելու հոգևոր զարգացում՝ հաղթահարելով բարոյականության և արդարության ավանդական տեսակետները, որոնք արմատացած են և կապված Աստծո ու քրիստոնեության հասկացությունների հետ: Քննենք Նիցշեի «Այսպես խոսեց զրադաշտը» աշխատությունից հետևյալ հատվածը, որը վերցված է աշխատության 3-րդ նախաբանից. «Ես ձեզ գերմարդն եմ ուսուցանում...»: ⁵ Այստեղ Նիցշեն գերմարդուն հակադրում է ժամանակակից մարդուն, ով իր առջև այլընտրանքային նպատակներ է դնում, օրինակ՝ ժողովրդավարությունը: Նիցշեն ժամանակակից մարդուն համարում է անզգա մի արարած, ով չունի նախաձեռնություն, կիրք և երազելու կարողություն: Նա պարզապես իր կյանքի համար զուլմար է վաստակում, որպեսզի տաքուկ կյանք ունենա: Այս գաղափարը գերակայում է «Այսպես խոսեց զրադաշտը» աշխատության մեջ:

Պոստմոդեռնիստական քննախոսությանը առաջին անգամ հանդիպում ենք 1950-ականների վերջին 60-ականների սկզբին: Պոստմոդեռնիզմն այն ժամանակ ընկալվեց որպես մի իրավիճակ, որը մարդկային ոչ մի բնագավառում չի ճանաչում պայմանականություններ, գիտակցության կամ կասկածամտության որևէ մակարդակ. քաղաքականություն, անհատականություն, արվեստ և այլն: Թվում է, թե պոստմոդեռնիզմին բնորոշ մոտեցումների երկակիությունը հոգս է ցնդեցնում ամեն ինչ: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո հարաբերությունների փոփոխություններ նկատվեցին տնտեսության, քաղաքականության, արվեստի և մյուս բոլոր բնագավառներում: Բոլոր այս փոփոխությունների պատճառը պոստմոդեռնիստական տրամադրություններն էին:

Պոստմոդեռնիզմի տեսությունը ծագել է 1970-ականներին: Այն հաջորդել է բազում ավանգարդիստական փորձությունների, որոնք կատարվել են մի շարք գործիչների կողմից, ինչպիսիք են մարքսիզմի տեսաբան Լուի Ալթուզերը, մշակութային քննադատ Ռոլանդ Բարտեսը, փիլիսոփա Ժակ Դերիդան, պատմաբան Միշել Ֆուկոն: «Ալթուզերը ոգեշնչված էր Բրեխտով, Բարտեսը՝ Ֆլորբերով և Պրուսով, Դերիդան՝ Նիցշեով, Հայդեգերով, Մալարմետով և Միշել Ֆուկոն՝ Նիցշեով ու Բատելիով»: ⁶

Նրանք ևս վիճում էին այն լեզվաբանական մոդուլների, տեքստի մեկնաբանության շուրջ, որոնք ներկայացված էին Դերիդայի լեզվական տեսություններում, որոնց հետագայում հետևեց Լյուդվիգ Վիթգենսթայնը: Այս տեսության համաձայն՝ մարդիկ դառնում էին պիեսի անբաժանելի մասնիկը: Ըստ այդմ՝ անհատականության

⁴ Lambert Laurance: Nietzsche's Teaching: An Introduction of "Thus Spoke Zarathustra". New Haven. Yale University Press. 1986. էջ 18.

⁵ Nietzsche Friedrich: Thus Spoken Zarathustra. Translated by Ardian del Caro and edited by Robert Pippin. Cambridge, Cambridge University Press. 2006, էջ 56.

⁶ Butler, 2002, էջ 6

ճգնաժամը դառնում է պոստմոդեռնիստական հասարակությունների կարևոր բաղադրիչ, որն իր արտացոլումն է գտնում պոստմոդեռնիստական հերոսների կերտման գործում: Պոստմոդեռնիստական դրամատուրգների համար հատկապես երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին անհատականության կորուստը դառնում է գերիշխող մոտիվ: Այս տրամադրությունները նկատելի են Բարտեսի ստեղծագործություններում, ինչպիսիք են «Սիրահարի ճառը» և «Ռուլանդ Բարտեսը Ռուլանդ Բարտեսի մասին» պիեսները:

Հայդեզերը հայտնի է որպես հետկանտյան փիլիսոփայության հիմնադիր և տարածող: Հայդեզերի փիլիսոփայության ազդեցությունը երկար պահպանվեց թե՛ փիլիսոփայության տեսության, թե՛ գրականության և թե՛ արվեստի բնագավառներում: Հայդեզերի կերպարը հակասական է , հատկապես նրա գաղափարները հակասական են այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է ֆաշիզմի՝ որպես երևույթի գնահատմանը: Նա ֆաշիզմի գոյության փաստի համար ոչ ներողություն է խնդրում, ոչ էլ արդարացնում այն: Ուղղակի նրա առանձին գործերում կարելի է հանդիպել այն փաստին, երբ ֆաշիզմը Հայդեզերն անվանում է «կյանքում գործած ամենամեծ հիմարություն»: Հայդեզերյան այսպես կոչված հակասությունը բարձրացնում է ընդհանուր հիմնախնդիրներ Հայդեզերի գաղափարախոսության և նրա՝ ազգային սոցիալիզմի հետ կապվածության վերաբերյալ:

Հայդեզերը պնդում է, որ արևմտյան փիլիսոփայությունը բաց է թողել այն հարցը, թե ինչ է ընդհանրապես գոյությունը: Նրա կարծիքով՝ գոյության վերաբերյալ հետաքննությունը հանգեցնում է այն եզրակացության, որ պատմության ընթացքում գոյությունը հիմնված է եղել որոշակի անձանց և նրանց գույքային կարողության վրա: Ըստ Հայդեզերի՝ առավել արժանահավատ վերլուծությունը գոյություն հասկացության վերաբերյալ կլինի այն, որը հիմնված կլինի մարդկային գոյության արդեն հայտնի հասկացությունների վրա: Ըստ գերմանացի փիլիսոփայի՝ մինչև այժմ փիլիսոփայությունը մարդկային գոյության վերաբերյալ ուսումնասիրությունները կատարել է ոչ ճիշտ ուղղությամբ, ինչի արդյունքում մարդկությանը զցել թյուրամացության մեջ, նրան խճճել մարդկային գոյության մասին հարցի պատասխաններում: Հայդեզերը հիմնախնդրի քննության նոր մոտեցում է առաջ քաշում՝ առաջարկում խնդիրը քննարկել փիլիսոփայության պատմության ընթացքում հաջորդական քայլերի քննության միջոցով: Հայդեզերը վստահ է, որ մարդկային գոյության հիմքում ընկած են տրամաբանություն, Աստված, գիտակցություն և գոյություն հիմնադրույթները, որոնց զարգացման շնորհիվ մարդկությունը կապվեց ժամանակակից տեխնոլոգիաներին: Հայդեզերի ստեղծագործությունը մեծ ազդեցություն է թողել փիլիսոփայության պատմության և գեղարվեստական գրականության վրա: Այն մեծ դեր է խաղացել էքզիստենցիալիզմի, պոստմոդեռնիզմի, մայրցամաքային փիլիսոփայության զարգացման հարցում: Ճանաչված փիլիսոփաներ, ինչպիսիք են Կարլ Յասպերսը, Լեո Ստրաուսը, Ամանո Ֆարդիդը, Հանս-Ջորջ Գադամերը, Ժան Պոլ Սարտրը, Միշել Ֆուկոն, Ժակ Դերիդան վերլուծության են ենթարկել Հայդեզերի ստեղծագործությունները: Հայդեզերի փիլիսոփայությունը հիմնված է երկու գույությունների վրա. առաջինը 2000 տարվա ընթացքում պատմության, փիլիսոփայության միջոցով կատարված ուսումնասիրությունն է այն բոլոր գոյացությունների, որոնք կան աշխարհում, այդ թվում նաև աշխարհը: Հայդեզերը նկատում է, որ այս ուսումնասիրությունների ժամանակ բաց է թողնվել մի կարևոր հարցի քննություն, այն, թե ինչ է գոյությունն ինքնին: Սա Հայդեզերի փիլիսոփայության գերխնդիրն է: Հայդեզերի հարցապնդումները գոյության հարցի վերաբերյալ կարելի է համարել պատմական փաստարկներ, որոնց վրա էլ իր հետագա ստեղծագործություններում Հայդեզերը կառուցում է իր մյուս հիմնախնդիրը՝ գոյության պատմությունը: Սա Հայդեզերն անվանում է գոյության մոռացության պատմություն, ինչը փիլիսոփայի պահանջների համաձայն՝ ապացուցում է այն փաստը, որ փիլիսոփայությունն իր քայլերն է անում փիլիսոփայության պատմության արդյունավետ ոչնչացման շնորհիվ:

Սա Հայդեզերի էկզիստենցիալ վերլուծության հիմնադրույթներից է, ինչը նա զարգացնում է «ժամանակ և կեցություն» աշխատության մեջ: Հայդեզերը պնդում է, որ փորձությունը մանրակրկիտ նկարագրելու արդյունքում կարելի է հանգել ինչ-որ իմաստով այն հարցի պատասխանին, թե ինչի համար է գոյությունը: «ժամանակ և կեցություն» աշխատության մեջ Հայդեզերը քննադատության է ենթարկում ավանդական դարձած այն մոտեցումը համաձայն որի՝ մարդուն ներկայացնում են որպես ռացիոնալ կենդանի, անձ, հոգի, կամ սուբյեկտ: Հայդեզերի փիլիսոփայության կենտրոնական թեմաներից է պատասխանատվությունը սեփական գոյության նկատմամբ՝

անկախ այն փաստին, որ հասարակական հարաբերությունում կա հուսահատություն, հոռի բարքեր ու հաշվարկի գերակայություն:

Ի տարբերություն Յուսեֆի՝ Չայդեգերը կարծում է, որ փիլիսոփայական տերմինաբանությունը չի կարող առանձնացված լինել պատմությունից, ուստի հմուտ փիլիսոփան իր ուսումնասիրությունները կատարելիս չի կարող խուսափել պատմական փաստերի համադրումից, լեզվամտածողության նրբությունները և տվյալ ազգի մտածողության առանձնահատկությունները հաշվի առնելուց:

Սա դեռ ամբողջը չէ ներկայացնելու Չայդեգերի քաղաքական և սոցիալական կոլեկտիվիզմը, որը ևս գերմանական փիլիսոփայության ժառանգությունն է: Ոչ էլ դրա արդյունքում հնարավոր է պարզել նրա հաճախ հակագիտական և հակատեխնոլոգիական համարվող տեսանկյունները: Դեռ հնարավոր էլ չէ պարզել նրա հակամարդկային մոտեցումները, նրա մոտեցումները կապված կեցության հետ հնազանդ լինելու հարցի վերաբերյալ, մեղավորության խնդիրը կեցության հարցում, կամ մարդկային զոհաբերությունը՝ հանուն կեցության, ինչը հաճախ մեկնաբանվում է որպես զոհաբերություն ոչնչի համար: Չայդեգերից հետո եկած սերունդների հիմնական նպատակն էր հրաժարվել նրա փիլիսոփայությունից եկած մետաֆիզիկական, ինչպես նաև միստիկական մնացորդներից:

Պոստմոդեռնիստները, ընդհակառակը, հակառեալիստներ են, որոնք կարծում են, որ անիմաստ է խոսել ճշմարտության մասին, այն էլ բառերով: Նրանք միայն ընդունում են այն, որ Չայդեգերի փիլիսոփայության հիմքում ընկած աղոտ հույսի գաղափարը կարող է կապ դառնալ մարդկային հասկացությունների և իրականության միջև: Բայց դա կարող է տեղի ունենալ միայն երևույթների մերկացման ճանապարհի ավարտին:

Պոստմոդեռնիստական ստեղծագործությունների վրա, իհարկե, մեծապես ազդել են Նիցշեի և Չայդեգերի փիլիսոփայական մոտեցումները, բայց նրանք ընտրել են վերոնշյալ երկու փիլիսոփաների գաղափարների փոխզիջումային տարբերակները: Հատկապես Ֆուկոյի և Դերիդայի պարագայում պոստմոդեռնիստների մեծամասնությունը հրաժարվում են Նիցշեի առաջ քաշած՝ մարդկային պոստեմպայի խտացված գաղափարից, փոխարենը ընդունում են Չայդեգերի հակահումանիզմը:

Սիորեն Աբյու Կիերկեգորը (5 մայիս, 1813 – 11 նոյեմբեր, 1855) դանիացի փիլիսոփա է, պոետ, սոցիալական քննադատ, կրոնական հեղինակ: Նա քննադատական տեքստեր է գրել կրոնի, բարոյականության, էթիկայի, հոգեբանության և փիլիսոփայության վերաբերյալ: Նա համարվում է առաջին էկզիստենցիալիստ փիլիսոփան:

Այժմ քննության ենթարկվում են այն հարցը, թե ինչ կապ ունի Կիերկեգորի փիլիսոփայությունը պոստմոդեռնիզմի հետ: Ուսումնասիրելով այս փիլիսոփայի աշխատությունները՝ կարելի է նկատել, որ նրա գործերը պարունակում են լեզվի և գիտելիքի վերլուծության պոստմոդեռնիստական տարրեր: Օրինակ՝ հակամետաֆիզիկական մոտեցումները, կամ կեղծանունով հանդես գալն ու քննադատություն հնչեցնելը պոստմոդեռնիստական նոր ծնունդ առնող տարրեր են: Ուստի այս փաստը հնարավորություն է տալիս կարծիք հայտնել, որ Կիերկեգորի ստեղծագործությունը բազմաթիվ պոստմոդեռնիստ գրողների համար սնուցման աղբյուր է դարձել: Օրինակ՝ Մարկ Թեյլորի ստեղծագործությունը մեծապես սնվել է Կիերկեգորի գաղափարախոսությունից: Կիերկեգորի ստեղծագործության կապը պոստմոդեռնիզմի հետ առավել ակնհայտ է Ադլերի գրքի վերաբերյալ նրա ուսումնասիրությունում: Այս փոքրիկ ստեղծագործությունը, որն ավելի հարմար է անվանել էսսե, մեծապես օգնել է հետագա սերունդների պոստմոդեռնիստ գրողներին, փիլիսոփաներին, իրենց աշխատությունների կառուցման և պոստմոդեռնիստական գաղափարների տարածման հարցում: Կիերկեգորը քննության է ենթարկում երկու «տարիքի շփոթությունները»: Մի կողմից «հանճարի» և «առաքյալի», մյուս կողմից «կցորդ հեղինակի» և «իրական հեղինակի» միջև շփոթությունները:

Պոստմոդեռնիստական ավանգարդի անուններից այսօր հայտնի են Միշել Ֆուկոյի, Ժակ Դերիդայի, Ժան Ֆրանսիս Լյոտարդի և Ռիչարդ Ռոթրի անունները: Պոստմոդեռնիզմը հաճախ իրեն հայտարարում է որպես հակափիլիսոփայական, ինչը նշանակում է, որ այն մերժում է բազում ավանդական փիլիսոփայական այլընտրանքներին: «Մետաֆիզիկայից ելնելով՝ պոստմոդեռնիզմը հակառեալիստական է, հետապնդում է այն գաղափարը, որ անհնար և անիմաստ է խոսել անկախ ամեն ինչից գոյություն ունեցող իրականության մասին,

պոստմոդեռնիզմը մերժում է այն գաղափարը, որ պատճառը կամ այլ եղանակները միջոց են իրականության մասին օբյեկտիվ գիտելիք ձեռք բերելու համար»:⁷

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո էկզիստենցիալիզմը դարձավ լայն տարածում ունեցող փիլիսոփայական և մշակութային ուղղություն, որը հիմնականում զարգացում ապրեց ֆրանսիացի գրողներ Ժան Պոլ Սարտրի և Ալբեր Բամյուի ստեղծագործությունների շնորհիվ: Իսկ Գերմանիայում նույն ժամանակահատվածում մեծ մասսայականություն էր վայելում Հայդեգերի «ժամանակ և կեցություն» աշխատությունը:

Սիմոն Դե Բովուարը ևս հայտնի էքզիստենցիալիստ գրող է, ով ողջ կյանքում Սարտրի կողքին էր: Նա իր «Երկրորդ սեռ»-ը և այլ ստեղծագործություններում քննության է ենթարկում ֆեմինիզմին, էքզիստենցիալիստական էթիկային, ռասիզմին, սոցիալական, դասային խտրականություններին վերաբերող հարցեր:

Ե՛վ էկզիստենցիալիստները, և՛ պոստմոդեռնիստները բազմիցս արտահայտել են այն կարծիքները, թե իրենց դավանած ուղղությունը դժվար է սահմանել: Ժան Պոլ Սարտրը, ով առաջինն է օգտագործել էկզիստենցիալիզմ արտահայտությունը, այն համոզմանն է, որ եթե սահմանվեր, թե ինչ է էկզիստենցիալիզմը, դա կխոչընդոտեր այդ ուղղության զարգացմանն ու ծաղկմանը: Նույն այդ կերպ պոստմոդեռնիստները հաճախ են կարծիքներ հայտնում, որ պոստմոդեռնիզմը մի ուղղություն է, որը հնարավոր չէ սահմանել: Համեմատելով վերոնշյալ երկու ուղղությունները՝ կարելի է բազում տարբերություններ և ընդհանուր գծեր տեսնել դրանց միջև: Թե՛ պոստմոդեռնիստները, թե՛ էկզիստենցիալիստները համաձայնության են եկել որոշ թեմաների շուրջ, որոնք արտացոլվել են էկզիստենցիալ գրականության մեջ: Այդպիսիք են ազատությունը, մարդկային ռեսուրսների սահմանափակությունը, մահը, ընտրությունը և այլ հասկացություններ: Իհարկե, այս հասկացություններին երբեմն էկզիստենցիալիստները մոտենում են տարբեր տեսանկյուններից: Սակայն միևնույն է էկզիստենցիալիզմի կենտրոնական և հիմնարար սկզբունքներ են շարունակում մնալ մարդու էության և անհատականության խնդիրները:

Այս սկզբունքի համաձայն՝ պոստմոդեռնիստները ևս առաջ են քաշում և քննության ենթարկում այնպիսի հարցեր, ինչպիսիք են մարդկային գիտելիքի սահմանափակության, գիտության, պատճառի սահմանափակության խնդիրը, պլուրալիզմը և մասնավոր ճշմարտությունները: Հատկանշական է այն, որ այս պարագայում հարցերի բարձրացման խնդիրն ավելի էական է, քան դրանց պատասխանների փնտրման և պատասխանների ստացման գործընթացը: Ուստի նորից հանգում ենք այն եզրակացության, որ պոստմոդեռնիստներին ավելի շատ հետաքրքրում են հարցերը, քան դրանց պատասխանները: Իրականում պոստմոդեռնիզմը հարցերին սպառիչ պատասխաններ տալու խնդիր իր առջև չի էլ դնում: Սա իրականում պետք չէ մեկնաբանել որպես հարցի պատասխանից խուսափելու միտում, այլ համարել, որ հարցերի բարձրացումը ենթադրում է նաև բախում իրականության հետ:

Այնուհետև առաջին գլխում ընդհանուր գծերով ներկայացնում են, թե ինչ է պոստմոդեռնիստական գրականությունը: Պոստմոդեռնիստական գրականության հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն ստեղծվել է հատվածականության, պարադոքսի, հարցական կասկածների հիման վրա: Պոստմոդեռնիստական գրականության ծնունդը կապվում է Երկրորդ Համաշխարհային պատերազմին հաջորդող ժամանակաշրջանի հետ: Ինչպես պոստմոդեռնիզմն ընդհանրապես, այնպես էլ պոստմոդեռնիստական գրականությունը ձգտում է դիմակայել՝ որպես ուղղություն համարվելու և կոնկրետ սահմանում ունենալու խնդիրին: Պոստմոդեռնիստական գրականությունը համադրվում է բազմաթիվ քննադատական տեսությունների հետ, հատկապես կազմաքանդման միտումների հետ: Պոստմոդեռնիստական գրականության մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ պոստմոդեռնիստական ստեղծագործությունները չունեն կոկիկ, ընդգրկում ավարտ, ինչը ընդունված երևույթ է

⁷ Hicks, 2004, էջ 16

մողեռնիստական ստեղծագործություններում: Պոստմողեռնիստական գրականությանը բնորոշ է նաև բարձր և ցածր դասի մշակույթների դասակարգումը: Գրականության մեջ պոստմողեռնիզմը որևէ առաջնորդի, կամ կենտրոնական հերոսի կողմից կազմակերպված ուղղություն, կամ շարժում չէ: Արդեն 60-70-ականներին պոստմողեռնիստական շարժումը քիչ-քիչ մարում է: Ուստի արդեն 80-ականները համարվում է պոստմողեռնիստական շարժման մարման ժամանակահատված: Թոմ Վուլֆը 1989-ին տպագրված իր հոդվածում, որը վերնագրված էր «Միլիոն ոտքանի գազանի անկումը», կոչ է անում պոստմողեռնիզմի փոխարեն տուրք տալ մողեռնիստական նոր ձևավորվող շարժումներին:

Ատենախոսության առաջին գլխի վերջին ենթագլուխը նվիրված է պոստմողեռնիստական թատրոնին: Ներկայացնում են պոստմողեռնիստական թատրոնի հիմնադիրներին, տարրերն ու առաձևահատկությունները: Պոստմողեռնիստական թատրոնը համաշխարհային թատրոնի բնագավառում վերջերս մուտք գործած երևույթ է: Այն ծնունդ է առել 1960-ականներին, Եվրոպայում՝ ծագելով պոստմողեռնիստական փիլիսոփայությունից: Պոստմողեռնիստական թատրոնը երևան է եկել որպես մողեռնիստական թատրոնին հակադիր երևույթ: Պոստմողեռնիստական ստեղծագործությունների մեծամասնությունը հիմնականում այսպես ասած իրենց պատկերացրած ճշմարտությունն են մատուցում հանդիսատեսին, փոխանակ նրան խրախուսելու հասնել իրենց անհատական ճշմարտության գիտակցմանը: Հիմնականում հենց այս պատճառով է, որ պոստմողեռնիստական թատրոնն ավելի շատ հարցեր է բարձրացնում, քան փորձում տալ պատասխաններ: Պոստմողեռնիստական թատրոնն անսահման հավանականությունների մի հարթակ է: Մարդկանց մեծամասնությունը, որոնք ներգրավված են պոստմողեռնիստական թատրոնում, հիմնականում անմասն են մնում բուն գործողություններին, սակայն միևնույն ժամանակ նրանք մինչև վերջ այդպես էլ չեն գիտակցում, որ ականաջից պոստմողեռնիստական փորձերի մի մաս են դարձել: Պոստմողեռնիստական թատրոնը պարունակում է բոլոր սոցիալական, փիլիսոփայական, գրական գծերը, որոնք բնորոշ են պոստմողեռնիզմին. պատմականության մերժում և ավելի շատ կենտրոնացում գործողության ընթացքի, քան հիմնական նպատակի վրա: Կախված նրանից, թե հանդիսատեսը արևելյան, արևմտյան, հարավային, թե հյուսիսային մշակույթի կրող է, նա իր յուրօրինակ պատկերացումն ունի «թատրոն» երևույթի մասին: Պոստմողեռնիստական թատրոնի շնորհիվ է, որ հանդիսատեսից յուրաքանչյուրն անձամբ զգում և ապրում է պիեսի հերոսների մահը: Ասվածի վառ ապացույցն է այն, որ Բարթն իր պիեսում հայտարարում է հեղինակի մահվան մասին, Ֆուկոն՝ մահացած հերոսի մասին է բարձրաձայնում և այլն: Բայց ի տարբերություն Ջեմիսոնի, որը կապիտալիզմի երևան բերած սպառողականության ջատագովն էր, քննադատական պոստմողեռնիստական թատրոնի տեսությունը սերում է ստրուկտուրալիզմից: Այս ուղղության ներկայացուցիչներից Սասուրը մերկացնում է մարդկային լեզվի կառուցվածքը՝ այն ներկայացնելով կողերի և նշանային համակարգի ձևով: Ընդօրինակելով այս սկզբունքը՝ Դերիդան վերլուծել է առարկայությունը՝ ըստ որի դասական դրաման հարում է Արիստոտելի մշակած դրամատիկ միացությունների օրենքին:

Պոստմողեռնիստական թատրոնի հիմնական հատկանիշներից է շեշտը դնել հիմնարար թեմաների և դիմախաղային հեզոնանքի վրա, ինչպես նաև արվեստի այլ դպրոցներից հավաքագրել և միավորել տարբեր մոտեցումներ ու գույներ: Նրա համոզմամբ՝ պոստմողեռնիզմն ավելի շատ շեշտադրումներ է կատարում իրերի բովանդակության, քան դրանց արտաքին տեսքի վրա: Նշանների և գաղափարների միջև կապն այլևս վերացած է, քանի որ ըստ Ֆուլսի՝ այս դեպքում արվեստն այլևս չի դառնում գեղագիտական փորձություն, այլ այն դառնում է զուտ որպես աշխարհն ընկալելու մի հասկացողություն: Այստեղից էլ գալիս է այն համոզումը, որ պոստմողեռնիստական դրամայի հիմնական նպատակը ոչ թե դասական պիեսը պատմելն է, դրա բովանդակությունը ներկայացնելը, այլ խախտելով բոլոր ավանդույթները՝ հնարավորինս քիչ պատմողական հատվածների, առաջին հայացքից ոչ այնքան կարևոր մանրամասների և տարրերի միջոցով պիեսի բուն իմաստը ներկայացնելը: Վերոնշյալին հասնելու համար որոշ քննադատներ առաջարկում են կիրառել բազում մեդիաներ. «Յուրաքանչյուր մեդիա՝ հաղորդագրությունները տարածելու իր ուրույն մեթոդներն ունի, բայց միայն դրանց միասնության պարագայում կարելի է հասնել նրան, որ հանդիսատեսը տվյալ առարկան կամ կերպարին ընկալի բազմաթիվ կողմերից: Եվ հենց բազմաթիվ մեդիաների կիրառության դեպքում էլ հանդիսատեսը կարող է լիովին

հասկանալ պիեսի բուն էությունը, չնայած մինչև վերջ էլ նրա համար չբացահայտված են մնում պիեսի բազում խորհրդավոր տարրեր:⁸

Պոստմոդեռնիստական թատրոնը առաջ է քաշում բեմական նոր ուղղություններ: Այն ավելի շատ փորձարարական է, որտեղ վերացած են կանոնակարգված սահմանագծերը: Այլևս երկխոսությունը հաղորդակցության հիմնական միջոցը չէ և երաժշտությունը, հնչյունները, շարժումը այլ տեսանելի տարրերն են դառնում բեմի վրա երկխոսություն, միտք արտահայտելու հիմնական բանալիները: Պոստմոդեռնիստական թատրոնն իր հետ բերեց այսպես ասած հեղափոխական գաղափարներ, որոնք մինչ այդ գոյություն չուներին արվեստի բնագավառում: Օրինակ՝ պոստմոդեռնիստական թատրոնում հաղորդակցության բանալի տարրերն են լեզվական, տեսողական, լսողական, հոտառական և ֆիզիկական համակարգերը: Հետագայում այն քննության է ենթարկում 20 սեմական նշանային համակարգեր, որոնք կարող են պոստմոդեռնիստական թատրոնում ծառայել որպես հաղորդակցության միջոցներ: Սա նաև մի յուրահատուկ փորձ էր կամուրջ հաստատել սեմական լեզուների վերաբերյալ տեսական քննարկումների և թատերական արտադրության միջև, որի կիրառությունից շահում է միայն պոստմոդեռնիստական թատերական «արտադրանքը»:

Հավելենք նաև, որ բազում ուսմունքների և դպրոցների շարքում պոստմոդեռնիստական մի յուրահատուկ դպրոց է նաև Դադայիզմը, որի համաձայն պոստմոդեռնիստական ստեղծագործությունը, ինքն իրեն ապակառուցելու միջոցով կարող է ցույց տալ անցյալի արտացոլանքը:

Պոստմոդեռնիզմի՝ թատրոն ներթափանցման առաջին փորձերը կատարվեցին 1930 թվականին Ֆրանսիայում, երբ Անտոնի Արտուարդն իր «Թատրոնն ու նրա նմանակը» վերնագրով գրքում խոսեց այդ մասին: Ուստի հաղորդակից դառնալով այս հեղինակների գործերին՝ Արտուարդը եկավ այն համոզման, որ թատրոնը պետք է հնարավորինս մեծ ազդեցություն գործի հանդիսատեսի վրա: Այդ իսկ պատճառով նա օգտագործում էր լուսավորության, հնչյունների և այլ բեմական տարրերի բարդ և տարօրինակ համադրություն: Նա առաջ քաշեց այն գաղափարը, որ դաժանությունը միայն սադիզմի, ցավի պատճառում, կամ ֆիզիկական բռնություն չի նշանակում, այլ այն օգնում է ջախջախել կեղծ իրականությունը: Արտուարդը, սակայն, չի մոռանում նաև հոգևորի մասին: Նա համոզված էր, որ թատրոնը հոգևորի արտահայտությունն է տարածության մեջ: «Դաժանության թատրոնը ստեղծվել է, որպեսզի թատրոնին վերադարձվի կյանքի դաժանությունն ու խստապահանջությունը, քանի որ բեմում էքստրենալ իրավիճակներն են, որ կարող են արտահայտել այն դաժանությունը, որի վրա հիմնված է իրականությունը: Դաժանությունը, որը հաճախ կարող է արյունոտ լինել, անհրաժեշտության դեպքում կարող է նույնացվել խիստ բարոյականության հետ, որը չի «վախենում» կյանքին վճարել այն գինը, որը պարտավոր է վճարել»:⁹

Ջեյմսոնը, ինչպես Արտուարդը, նույնպես ժխտում է բոլոր ձևերը և առաջացած քաոսը, առաջ է քաշում իր բեմադրություններում հստակ կանոնակարգի օգտագործման տեխնիկան: Այստեղ երևում է Շեքսպիրի և Սենեկայի ազդեցությունը:

Մյուս անձնավորությունը, որը մեծապես ազդեցություն է թողել պոստմոդեռնիստական թատրոնի վրա ժակ Դերիդան է: Իհարկե, նա փիլիսոփա էր, սակայն ինչպես Արտուարդը, նա շեշտում էր այն հանգամանքը, որ պոստմոդեռնիստական ստեղծագործության մեջ տեքստը կախվածության մեջ է գտնվում դերասանի ֆիզիկական տվյալներից:

Էպիկական թատրոնի ներկայացուցիչ է համարվում Բերտոլդ Բրեխտը: Բրեխտը ցանկանում էր, որպեսզի իր հանդիսատեսը որդեգրի քննադատական մոտեցումներ, որպեսզի կարողանա ընկալել սոցիալական անարդարությունն ու շահագործումը և կարողանա մեկ քայլ առաջ անցնել թատերական ներկայացման մեջ առաջ քաշված խնդիրներից և կարողանա որևէ փոփոխություն կատարել աշխարհում եղած խնդիրները լուծելու առումով: Այս պատճառով էլ Բրեխտը օգտագործում էր այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք հանդիսատեսին հիշեցնում էին, որ տվյալ ստեղծագործությունն ընդամենը իրականության ներկայացումն է, այլ ոչ թե

⁸ Քեյն, 2010, էջ 22

⁹ Արտուարդ, 1968, էջ 66

իրականություն: Իրականությունը՝ որպես թատերական իրադարձություն ներկայացնելով՝ Բրեխտը հույս ուներ համոզել հանդիսատեսին, որ իրականությունը կարող է նաև փոփոխության ենթարկվել: Բրեխտը ցանկանում էր, որ դերասանները բեմի վրա կարողանան պահպանել այն ներդաշնակությունը, որ բեմի վրա մարմնավորելով որևէ հերոսի, այդ նույն հերոսը կարող է հայտնվել նաև կյանքում: Սրան հասնելու համար Բրեխտն օգտագործում է բազում մեթոդներ, օրինակ՝ ժեստերի լեզուն, դերասանական վարքի կտրուկ փոփոխությունը, հերոսներին հնարավորություն տալը սեփական բանականությամբ որոշումներ կայացնելը: այս բոլորը եղանակներ են, որոնք ուղղված են հանդիսատեսին հնարավորություն տալուն քննադատության ենթարկել այն հասարակության մանրակերտը, որը տեսնում են բեմի վրա, երբ ընթացքի մեջ է էպիկական թատերական ներկայացումը: Այսպիսով, Բրեխտի և Արտուարդի տեսություններն ու գաղափարները մեծապես ազդեցություն են թողել պոստմոդեռնիստական պիեսների և պոստմոդեռնիստ հեղինակների աշխատությունների վրա: Բազում քննադատներ համաձայն են այն մտքի հետ, որ Սամուել Բեքեթի «Գոդոյին սպասելիս» և «Խաղի վերջը» ստեղծագործությունները գտնվում են մոդեռնիստական և պոստմոդեռնիստական թատրոնի սահմանագծում: Այն ավանդույթները, որոնք Արտուարդը արհամարհում էր, Բեքեթն օգտագործեց իր ստեղծագործություններում և մի նոր որակի հասցրեց դրանք: «Չամլետ-մեքենան» պոստմոդեռնիստական դրամա է: Մյուլլերի պիեսը, ինչպես Շեքսպիրի «Չամլետը», ունի հինգ գործողություն, չնայած ձեռագիրն, ի տարբերություն Շեքսպիրի «Չամլետի», բավականին խտացված է, ողջ տեքստը կազմում է ընդամենը 8 էջ: Ավելին, առաջին գործողությունից հետո կերպարները հեռանում են պիեսի բնօրինակից: Այդ մոտեցումն իր գագաթնակետին է հասնում չորրորդ գործողության ժամանակ, երբ կերպարները ընդհանրապես դուրս են գալիս թատերական ենթատեքստից: Ընդհանուր առմամբ պիեսի ձեռագիրը բաց է տարբեր մեկնաբանությունների համար: Այն ներառում է ֆեմինիզմին, էկոլոգիական շարժմանը վերաբերող բազում թեմաներ: Պիեսը շարունակում է մնալ Մյուլլերի՝ ամենահաճախը բեմադրվող ստեղծագործություններից: Մյուլլերի՝ «Չամլետ-մեքենա» պիեսի սեփական բեմադրությունը, որը տեղի ունեցավ 1990 թվականին, Բեռլինում տևեց յոթ ու կես ժամ:

Գլուխ 2.

ԱՔՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է արևմտյան թատրոնի ընդհանուր նկարագրի ներկայացմանը: Այստեղ սահմանել են, թե ինչ է արևմտյան թատրոնը, անդրադարձել արևմտյանի, միհիլիզմի և էքզիստենցիալիզմի միջև գոյություն ունեցող կապերին: Այս գլխում անդրադարձել են նաև արևմտյան թատրոնին բնորոշ թատերական տարրերին:

Արևմտյան թատրոնը հիմնադրվել է Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում: Այս ուղղության արմատները ձգվում են մինչև սյուրռեալիզմ, էքսպրեսիոնիզմ: Այս ուղղությունը ծնունդ առավ այն ժամանակ, երբ պատերազմից հետո մարդիկ հայտնաբերեցին, որ աշխարհն այլևս չէ երազանքներով ու լուսավոր ապագայի մասին սպասելիքներով: Եվ մարդկային կյանքի ու նրա շրջապատի միջև եղած այս տարանջատումն է պատճառ դարձել կյանքի արևմտյանության հանգեցմանը: Արևմտյան թատրոնը մի յուրօրինակ ըմբոստություն է ուղղված գրական և մշակութային ավանդական մեթոդների դեմ: Ավելի վաղ մոտեցումների համաձայն՝ յուրաքանչյուր անհատ պոստեմցյալ հերոս է: Այդ տեսության համաձայն՝ յուրաքանչյուր անհատ ապրում է իր հորինած առանձին տիեզերքում: Այն ստեղծվում է ոչնչից, ուստի ստացվում է, որ մարդու վախճանը ևս պետք է կանխատեսել ոչնչության մեջ: Ուստի մարդկության գոյություն լիովին արևմտյան է: Այս դիտարկման լավագույն օրինակն է Սիգիֆուսի կերպարը: Նա աստվածների կողմից դատապարտված էր մի մեծ քարի կտոր հրելով հասցնել մինչև սարի գագաթ, այնուհետև հետևել, թե ինչպես է այն վայր գլորվում: Սիգիֆուսը սկզբում մտածում է, որ ինքն այլևս ուժ չունի ու ընկնում է հուսահատության գիրկը: Սակայն այս զգացմունքներին հաջորդում է այն հույսը, որ այն, ինչ ինքն է անում, յուրահատուկ ու բացառիկ գործողություն է և ինքը դառնում է բացառիկության խորհրդանիշը: Այնինչ նա չի գիտակցում, որ այդպիսով ինքն ընկնում է անմտության գիրկը:

